

«AIR FRANCE BAGGAGE PRO ARMENIA»

Մրցույթի կանոններ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մրցույթի պատվիրատուն «Մոսիետե Էյր Ֆրանս» ներկայացուցչությունն է (Հայաստան, Երևան, Զվարթնոց Օդանավակայան): Մրցույթի կազմակերպիչը և կապալառուն անհատ ձեռներեց Օ.Վ. Ջոզեֆովն է (Ձեռնարկությունների ու կազմակերպությունների միասնական պետական ռեգիստրի ծածկագիրը 2779003936, Ուկրաինա, Կիև, Սիկոբսկու փող. 1, գրասենյակ 167): Մրցույթի շրջանակներում մրցակիցները մասնակցում են շահումով խաղի, որի իմաստն է ուղեբեռը ճիշտ դասավորելով առավելագույն միավորներ հավաքելն ու Մրցանակը շահելը: Մրցանակը մեկ անձի համար Էյր Ֆրանս ավիաընկերության Էկոնոմ դասի դեպի Փարիզ հետադարձով ավիատոմս է: Մրցույթը կանցկացվի 11.11.2021-ից մինչև 28.11.2021-ը ներառյալ: Մրցույթի ամսաթվերը կարող են փոփոխվել և ցանկացած փոփոխության դեպքում Կազմակերպիչը կհայտարարի դրա մասին հետևյալ վեբ-կայքում՝ am.game-af.com:

ՈՎ ԿԱՐՈՂ Է ՄԱՍՆԱԿՑԵԼ

1. 18 տարին լրացած ցանկացած իրավունակ անձ, որը հաշվառված է և մշտապես բնակվում է Հայաստանում, կարող է դառնալ մրցույթի մասնակից:
2. Այլ երկրների քաղաքացիները չեն կարող դառնալ մասնակից՝ անկախ այս մրցույթին մասնակցելու համար ձեռնարկած քայլերից:
3. Կազմակերպչի աշխատակիցները, ներկայացուցիչները, փոխկապակցված անձինք, ինչպես նաև նրանց ընտանիքների անդամները չեն կարող մասնակցել այս մրցույթին:
4. Սույն մրցույթով զբաղվող գովազդային գործակալությունների սեփականատերերը, աշխատակիցները, ինչպես նաև նրանց ընտանիքների անդամները չեն կարող մասնակցել այս մրցույթին:

ԻՆՉՊԵՍ ՄԱՍՆԱԿՑԵԼ ՄՐՑՈՒՅԹԻՆ

Մրցույթի մասնակից դառնալու և Մրցանակ շահելու համար այս Կանոնների բոլոր պահանջներին բավարարող անձը պետք է սկսի խաղը՝ <https://paste.pics/EUX5I> հղումով անցնելուց հետո սեղմելով «ԽԱՂԱԼ» կոճակը: Բավականաչափ միավորներ հավաքելուն կամ հինգ փորձը սպառելուն պես մասնակիցը պետք է պահպանի արդյունքները հետևյալ վեբ-կայքում՝ <https://paste.pics/EUX46>: Անելով դա մասնակիցը պետք է լրացնի ձևաչափը և հաստատի իր էլ. հասցեն:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. «AIR FRANCE BAGGAGE PRO ARMENIA» մրցույթը (այսուհետ՝ Մրցույթ) անց է կացվում Էյր Ֆրանս ավիաընկերության ծառայությունների գովազդային արշավի շրջանակներում:
2. Ձևը լրացնելով Դուք դառնում եք Մրցույթի մասնակից և համաձայնություն եք տալիս սույն Կանոնների պայմաններին:

3. Մրցույթը սկսվելու է 11.11.2021թ. (ժամը 10:00-ին Հայաստանի ժամանակով) և ավարտվելու է 28.11.2021թ. (ժամը 23:00-ին Հայաստանի ժամանակով) ներառյալ: Խաղին գրանցվել և մասնակցել կարելի է 11.11.2021թ. (ժամը 10:00-ից Հայաստանի ժամանակով) մինչև 28.11.2021թ. (ժամը 23:00 Հայաստանի ժամանակով): Հաղթողը ընտրվելու է Կազմակերպչի կողմից 29.11.2021թ.-ին, իսկ ծանուցումը տրվելու է 30.11.2021թ.-ին: Մրցույթի ամսաթվերը կարող են փոփոխվել և ցանկացած փոփոխության դեպքում Կազմակերպիչը կհայտարարի դրա մասին հետևյալ վեբ-կայքում՝ am.game-af.com:
4. Հաղթող է ճանաչվում ամենաշատ միավորներ հավաքած մասնակիցը: Հավասար միավորներ հավաքած երկու կամ ավելի մասնակիցների դեպքում ընտրությունը կատարվում է պատահականության սկզբունքով:
5. Մասնակիցը իր ճամփորդությունը պետք է սկսի Զվարթնոց օդանավակայանից (Երևան, Հայաստան): Եթե մասնակիցը այլ քաղաքում է ապրում, նա պետք է դեպի Երևան իր ճամփորդությունը ինքնուրույն կազմակերպի:
6. Մասնակիցը կծանուցվի Էյր Ֆրանս ավիաընկերության կողմից այս Մրցույթի հաղթող դառնալու մասին: Ծանուցումը կիրականացվի Կազմակերպչի կողմից էլ. փոստի միջոցով:
7. Եթե հաղթողն էլ. նամակում նշված ժամանակահատվածում չպատասխանի նամակին, ապա Էյր Ֆրանս ավիաընկերությունը կամ Կազմակերպիչը կարող են այլ հաղթող ընտրել:
8. Էյր Ֆրանս ավիաընկերությունը կամ Կազմակերպիչը կարող են հաղթողի բնակության վայրի կամ տարիքի վերաբերյալ գրավոր հաստատում պահանջել:
9. Էյր Ֆրանս ավիաընկերությունը կարող է մերժել մրցույթի մասնակցի կողմից ներկայացված ձևը, եթե այն չի համապատասխանում սույն Կանոններին:
10. Էյր Ֆրանս ավիաընկերությունը և Կազմակերպիչը չեն կարող պատասխանատու լինել տեխնիկական խնդիրների պատճառով Ձևում ներկայացված տեղեկատվության կամ հենց Ձևի վնասման կամ կորստի համար:
11. Այս Մրցույթի առնչությամբ Էյր Ֆրանս ավիաընկերության բոլոր որոշումները վերջնական են և անառարկելի:
12. Էյր Ֆրանս ավիաընկերությունը բացառիկ իրավունք ունի փոխել Մրցանակի հանձնման պայմանները, ժամանակը և կարգը, ինչպես նաև փոխել հենց Մրցանակը: Ցանկացած այսպիսի փոփոխություն կիրառարակվի am.game-af.com կայքում:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՐՑԱՆԱԿԻ ԵՎ ՄՐՑԱՆԱԿԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մրցանակը դեպի Փարիզ (Ֆրանսիա) հետադարձով Էյր Ֆրանս ավիաընկերության կողմից իրականացվող թռիչքի էկոնոմ դասի ավիատոմս է: Թռիչքը սկսվում է Երևանից (Զվարթնոց օդանավակայան):

1. Տոմսը ամրագրվում է հաղթողի նախապատվությունների համաձայն՝ կախված դրա առկայությունից:
2. Փոխադրողի ընդհանուր պայմանները հրապարակված են www.airfrance.am կայքում և կիրառելի են որպես Մրցանակ տրվող տոմսի նկատմամբ:
3. Մրցանակ ավիատոմսը ամրագրվում է ընտրված ամսաթվին՝ համապատասխան դատում տեղերի առկայության դեպքում: Առկայությունը պետք է ստուգվի Էյր Ֆրանսի ներկայացուցչի հետ ամրագրման պահին:

4. Թռիչքը պետք է ամրագրվի 01.12.2021թ.-ից մինչև 15.12.2022թ.-ը ներառյալ ժամանակահատվածում:
5. Թռիչքը ամրագրելուց հետո այն չի կարող փոփոխվել:
6. Ճամփորդությունը պետք է սկսվի և ավարտվի Զվարթնոց օդանավակայանում (Երևան, Հայաստան):
7. Թռիչքը պետք է իրականացվի Էյր Ֆրանս ավիաընկերության կողմից:
8. Միայն հաղթողը իրավունք ունի ստանալ Մրցանակը: Այն չի կարող փոխանցվել որևէ երրորդ անձի կամ փոխանակվել կանխիկ գումարի հետ:
9. Միայն 18 տարին լրացած իրավունակ անձը, ով հաշվառված է և մշտապես բնակվում է Հայաստանում կարող է ստանալ Մրցանակը:
10. Հաղթողն է վճարում որպես Մրցանակ ստացած ավիատոմսին առնչվող հավելավճարները և հարկերը:
11. Հաղթողն է պատասխանատու ճամփորդությանն առնչվող բոլոր փաստաթղթերի և վիզայի ստացման ու ֆինանսավորման համար:
12. Էյր Ֆրանս ավիաընկերությունը պատասխանատու չէ ճամփորդության հետ կապված լրացուցիչ ծախսերի, ինչպես նաև տրամադրված ավիատոմսի ընդունման և օգտագործման կամ ոչ պատշաճ օգտագործման համար:
13. Էյր Ֆրանս ավիաընկերությունը պատասխանատու չէ երրորդ անձի գործողությունների կամ անկանխատեսելի հանգամանքների (ֆորս-մաժորի) արդյունքում իր պարտավորությունների կատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

**ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՂԹՈՂԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ,
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Էյր Ֆրանս ավիաընկերությունը և Կազմակերպիչը պատասխանատու չեն.

1. Մասնակցի կողմից սույն Կանոններով սահմանված պարտականությունների չկատարման (ոչ պատշաճ կատարման) համար:
2. Ոչ հավաստի/սխալ տեղեկատվություն, այդ թվում էլ.հասցե, տրամադրելու արդյունքում Հաղթողի կողմից Մրցանակի մասին ծանուցումը չստանալու համար:
3. Փոստի կամ փոխադրողի աշխատանքի թերության համար:
4. Բջջային օպերատորի աշխատանքի թերության, պարբերական ընդհատումների և Մասնակցի ինտերնետ մատակարարի ոչ պատշաճ տեխնիկական աշխատանքի կամ այլ անկանխատեսելի հանգամանքների համար, որոնք զրկում են Կազմակերպչին նրա պարտականությունները կատարելու հնարավորությունից:
5. Մասնակցի կողմից տրամադրած անձնական տվյալների կամ այլ տեղեկատվության իրավաչափության համար:
6. Հաղթողի ցանկացած այնպիսի հանգամանքների կամ փաստերի, գործողությունների/անգործության համար, որոնք հանգեցրել են Մրցանակի ստացման անհնարիության:
7. Մրցանակը ոչ պատշաճ օգտագործելու, ինչպես նաև սույն Կանոնները ճշտորեն չկատարելու հետևանքով Հաղթողին պատճառված ցանկացած վնասի համար:
8. Հաղթողի հետ կապված դժբախտ պատահարների կամ նրան պատճառված վնասի համար, բացի այն դեպքերից, երբ այդ դժբախտ պատահարը/վնասը պատճառվել է Մրցույթի Կազմակերպչի կողմից:

9. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ցանկացած Ֆորս-Մաժորային հանգամանքների համար:

ԱՅԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Մասնակիցները կարող են այս Մրցույթին մասնակցել միայն մեկ անգամ:
2. Էյր Ֆրանս ավիաընկերության Գաղտնիության Կանոնակարգը կիրառելի է ընկերության կողմից սույն Մրցույթի ընթացքում ստացված ցանկացած տեղեկատվության նկատմամբ: Կանոնակարգը հրապարակված է www.airfrance.am կայքում:
3. Էյր Ֆրանս ավիաընկերությունը իրավունք ունի որակազրկել ցանկացած մասնակցի, ով կասկածվում է խարդախության մեջ: